Երևանի հ. 102 հիմնական դպրոց

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Համագործակցային ուսուցման կազմակերպման առանձնահատկությունները

Ուսուցիչ՝ Շուշանիկ Սարգսյան

Ղեկավար՝ Մանուշակ Պետրոսյան

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3-4

Բուն շարադրանք

Համագործակցային ուսուցման տարրեր 5-6

Համագործակցային ուսուցման խմբերի տեսակները 6

Համագործակցային ուսուցման մեթոդներ

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ 7

Խճանկար (Ջիգսո, Jigsaw) 7

Շրջագայություն պատկերասրահում 8

Երեք բանալի և մեկ կողպեք 8

Հինգ րոպեանոց ազատ շարադրանք 8

Համագործակցային ուսուցման արդյունավետությունը 8-11

Ինչու՞ օգտագործել համագործակցային ուսուցումը 11

Համագործակցային միջավայրում փոքր խմբերի ուսուցման առավելությունները 11-12

Համատեղ ուսուցման առավելությունները 12-14

Համագործակցային դասասենյակի բնութագրերը 14-15

Խմբի չափը 15-16

Տարանջատում 16-17

Եզրակացություն 17-18

Օգտագործված գրականության ցանկ 18

ՆԱԽԱԲԱՆ

Մեր երկրի կարևոր հարստություններից մեկը գիտական ներուժն է, որի ձևավորման պատասխանատվությունը կրում է նաև հանրակրթությունը: Հասարակական բոլոր փոփոխությունները ազդում են նաև կրթական համակարգի վրա: Հետանկախացման տարիներին ՀՀ հանրակրթության մեջ իրականացվում են կրթական բարեփոխումներ, որոնք անդրադառնում են կրթության կազմակերպման տարբեր հարցերի: Այս աշխատանքում ցանկանում ենք անդրադառնալ բարեփոխումների պահանջով առաջադրված համագործակցային մեթոդների կիրառման արդյունավետության ուղիների մատնանշմանը: Համագործակցային մեթոդների կիրառումն ինքնանպատակ չէ. դրանք պետք է ուղղված լինեն սովորողների ինչպես մտավոր ու զգայական կարողությունների, այնպես էլ ինքնուրույնության, սոցիալականացման և այլ հմտությունների զարգացմանը:

Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է: Այն ենթանդրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ: Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախվածության ապահովումը:

Համագործակցային ուսուցումը այն միջոցն է, որի շնորհիվ հնարավոր է դաստիարակել հարգանք մարդկանց ընդունակությունների, կարողությունների, բնավորության առանձնահատկությունների և տարբերությունների նկատմամբ: Համագործակցային ուսուցումը փորձում է լուծել նաև սովորողների հնարավորինս համաչափ զարգացման խնդիրը, խրախուսում է միմիանց օգնելու, աջակցելու որակները, ինչը շատ կարևոր է ժողովրդավարական հասարակությունում մեծ վտանգներ պարունակող բևեռացումից խուսափելու առումով: Համագործակցային ուսուցման տեսության մեջ ընդունված է, որ սոցիալական հմտությունները խմբային արդյունավետ աշխատանքի հիմքն են: Երկխոսությունը, հաղորդակցումը, աջակցությունը, օգնության հասնելը, օգնության տրամադրումը սոցիալական այն հմտություններն են, որոնք ապահովում են համակեցությունը և համագործակցությունը: Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի

յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանն ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտի միջոցով: Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի մշակմամբ հմուտ համագործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ ձևավորելը: Համագործակցությունն ստեղծում է ինքնաճանաչման ավելի բարձր մակարդակ, քան կարող են ապահովել մրցակցային կամ անհատական ուսուցման եղանակները: Համագործակցային իրավիճակներում անհատները միտված են փոխներգործելու, նպաստելու միմյանց հաջողությանը, ձևավորելու հետաքրքրությունների լայն շրջանակ և կազմելու միմյանց կարողությունների մասին իրական պատկերացումներ, հետևաբար տալիս են ճշմարիտ հետադարձ կապ:

Բուն շարադրանք

Մեթոդի ընտրության վրա կարող են ազդել՝

- ուսուցման նպատակները և խնդիրները,
- նյութի բովանդակությունը,
- ուսումնական նյութի ծավալը և բարդությունը,
- նոր գիտելիք ձեռք բերելու նկատմամբ աշակերտների շահագրգռվածությունը և համագործակցային հմտությունների մակարդակը,
- աշակերտների տարիքային առանձնահատկությունները,
- ուսումնական ժամաքանակը,
- ուսուցման նյութատեխնիկական պայմանները,
- ուսուցիչ –աշակերտ փոխհարաբերությունները,
- աշակերտների թվաքանակը դասարանում,
- ուսուցչի պատրաստվածության մակարդակը և այլն:

Համագործակցային ուսուցման տարրերը

Համագործակցային ուսուցման տարրերը ըստ Ջոնսոնների հինգն են՝

1. Դրական փոխկախվածություն. Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջացելու մթնոլորտ: Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն: Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը: Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին
2. Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն. Խմբի անդամները համգործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:
3. Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն. Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը:
4. Սոցիալական հմտություններ.Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդում ունենալը:
5. Խմբային գործընթաց. Խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է: Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը:

Հետագայում այդ տարրերին Պասի Սալբերգի կողմից ավելացվեց փոխներգործուն/ինտերակտիվ առաջադրանքը որպես համագործակցային ուսուցման 6-րդ տարր: Նրա կարևոր չափանիշը այն է, որ խմբի անդամները հեշտությամբ մասնակցեն առաջադրանքի կատարմանը:

Համագործակցային ուսուցման խմբերի տեսակները

1. Համագործակցային ուսուցման ֆորմալ խմբեր
   - Համագործակցային ուսուցման ֆորմալ խմբերը փոքր են՝ 2-4 անդամ:
   - Հանձնարարականների ռազմավարությունը հետևյալն է՝
   - խմբերը ձևակերպում են առաջադրանքը, լուծում այն և պատրաստվում ներկայացնել,
   - պատահականորեն ընտրված խմբի անդամը ներկայացնում է խմբի աշխատանքի արդյունքը,
   - բոլոր անդամները քննարկում են բոլոր լուծումները, տալիս հարցեր,
   - յուրաքանչյուր խումբ պատրաստում և ներկայացնում է աշխատանքի հաշվետվություն:
2. Համագործակցային ուսուցման ոչ ֆորմալ խմբեր
   - Համագործակցային ուսուցման ոչ ֆորմալ խմբերը ժամանակավոր գործող խմբեր են, որոնք օգտագործվում են դասախոսության, դիդակտիկ նյութերի ցուցադրման, ֆիլմ դիտելու ժամանակ սովորողների ուշադրությունը ուսուցանվող նյութի վրա կենտրոնացնելու, ուսուցման ընթացքում օգտոգործվող նյութերը նախապատրաստելու համար:
3. Համագործակցային ուսուցման հենակետային խմբեր
   - Համագործակցային հենակետային խմբերը կայուն անդամներով երկարաժամկետ խմբեր են, որոնց աշխատանքը տևում է ողջ դասընթացի, ծրագրի շրջանակներում: Խմբի անդամները միմյանց օգնում են, աջակցում, խրախուսում՝ նպաստելով առաջադրանքի կատարմանն ու գիտելիքների ձեռքբերմանը: Դրանք մշտական են և ապահովում են երկարաժամկետ, գործընկերային փոխհարաբերություններ:

Համագործակցային ուսուցման մեթոդներ

Աշակերտների թիմային առաջադիմություն

- Խճանկար
- Շրջագայություն պատկերասրահում
- Երեք բանալի և մեկ կողպեք
- Հինգրոպեանոց ազատ շարադրանք:

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ

Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերին:

Խճանկար (Ջիգսո, Jigsaw)

Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է: Այն մշակվել և փորձարկվել է Տեխասի A&M համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից: Խճանկարի փուլերն են.

- նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում,
- աշխատանք փորձագիտական խմբում,
- աշխատանք ուսումնական խմբում,
- ավարտական աշխատանք,
- ամփոփում:

Շրջագայություն պատկերասրահում

Սա «Խճանկար» մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև

զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

Երեք բանալի և մեկ կողպեք

Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան: Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն:

Հինգ րոպեանոց ազատ շարադրանք

Հինգրոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանք:

Համագործակցային ուսուցման արդյունավետությունը

Համագործակցային ուսուցման արդյունավետության համար շատ կարևոր է ուսուցչի դասի պլանավորման նախապատրաստական աշխատանքների գրագետ կազմակերպումը: Այն ուսուցչից պահանջում է՝

- հիմնավորել տվյալ դասը համագործակցային խմբերով կազմակերպելու անհրաժեշտությունը,
- որոշել համապատասխան խմբեր կազմելու սկզբունքները, ձևերը,
- նախապատրաստել անհրաժեշտ բաշխիչ նյութեր,
- ձևակերպել նպատակներին համապատասխան առաջադրանքներ,
- ձևակերպել առաջադրանքների կատարման հստակ հրահանգներ,

- որոշել հանձնարարությունների համապատասխան ծավալ:

Դասի կազմակերպման ժամանակ ուսուցչի հիմնական աշխատանքը կլինի բոլոր խմբերի աշխատանքների վերահսկումն ու ուղղորդումը: Յուրաքանչյուր մեթոդի կիրառման նպատակները խիստ բազմազան են, ինչը ենթադրում է նաև, նպատակից կախված, մեթոդի ձևափոխման հնարավորություն: Ցանկացած դաս և դասարան եզակի է, ուստի ուսուցչի վարպետության ցուցանիշներից մեկը նպատակին համապատասխան մեթոդի ընտրությունն է: Համագործակցային ուսուցման առավելությունները Համագործակցային մեթոդները մեծ ներուժ ունեն աշակերտակենտրոն ուսուցում կազմակերպելու համար, ինչը ևս կրթական բարեփոխումների կարևոր պահանջներից է: Նշենք նաև, որ ժամանակակից կրթական գործընթացում կարևորվում է ոչ թե պատրաստի գիտելիքի մատուցումն ուսուցչի կողմից, այլ աշակերտին մասնակից դարձնելը այդ գիտելիքի ձեռքբերմանը: Համագործակցային մեթոդները թույլ են տալիս առավել արդյունավետ յուրացնել նոր նյութը, զարգացնել ինքնուրույնության, համագործակցային, հետազոտական աշխատանք կատարելու բազում հմտություններ, օրինակ՝ տեղեկույթի որոնման, հավաքման, մշակման և այլն: Սակայն այդ հմտությունների ձեռքբերումը սովորողների կողմից երկարատև աշխատանքի արդյունք է, իսկ ուսուցչին հնարավորություն է տալիս կատարելագործել, հարստացնել իր մեթոդական մոտեցումները տարբեր խնդիրների լուծման ժամանակ: Այսօր մանկավարժների մեթոդական զինանոցը բավականին հարուստ է, սակայն բոլորովին այլ է դրանց կիրառությունը: Դասալսումների ժամանակ ուսուցիչների կողմից կիրառվում են բազում մեթոդներ, սակայն դրանք գրեթե միշտ կա՛մ չեն հասնում տրամաբանական ավարտին՝ դասի նպատակին, կա՛մ էլ ժամանակի մեջ չեն տեղավորվում, խմբերը համասեռ չեն կազմվում, խմբերում թիմային աշխատանքը չի ստացվում, ոչ բոլորն են ակտիվություն ցուցաբերում, անհրաժեշտ պահանջները կա՛մ չեն հասկանում, կա՛մ էլ թերի են կատարում: Ցանկացած նոր աշխատանք կատարելիս կարող են բացահայտվել բազում թերություններ, որոնք շտկվում, ճշգրտվում են աշխատանքի բազմակի կրկնության արդյունքում:

Համագործակցային ուսուցումը արդյունավետ է այն դեպքում, երբ առկա է ոչ միայն աշակերտ - աշակերտ, աշակերտ – ուսուցիչ համագործակցությունը, այլև՝ ուսուցիչ –

ուսուցիչ համագործակցությունը: Փորձը ցույց է տալիս, որ աշակերտները շատ ավելի հեշտ են հարմարվում համագործակցային աշխատաոճին, քան ուսուցիչները: Մինչդեռ համագործակցային ուսուցման գաղափարն անավարտ է առանց ուսուցիչների համագործակցային աշխատաոճի: Որակյալ ուսուցում ապահովելու համար դպրոցները պետք է մրցակցային, անհատապաշտական կազմակերպական կառոցվածքից անցնեն համագործակցային, թիմային կառուցվածքին: Ուսուցման արդյունավետությունը շոշափելիորեն բարձրանում է, երբ ուսուցչական կազմը գործում է որպես թիմ: «Տեխնոլոգիա» բառը առաջացել է հին հունարեն տեխնո՝ արվեստ, վարպետություն, կարողության և լոգոս՝ խոսք, գիտություն բառերից: Վ. Պ. Բեսպալկո. «Մանկավարժական տեխնոլոգիան դիտագիտական համակարգի գործընթացային բաղկացուցիչն է: Ա.Վ. Կլարին. «Մանկավարժական տեխնոլոգիա նշանակում, է բոլոր անհատական, մեթոդաբանական միջոցների համակարգային ամբողջություն և գործելու կարգ, ինչն անհրաժեշտ է մանկավարժական նպատակներիներին հասնելու համար : Համագործակցային ուսուցման տեխնոլոգիան այլընտրանքային մանկավարժական մոտեցում է: Այն ենթանդրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ: Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախվածության ապահովումը:

Մանկավարժական տեխնոլոգիաներն ունեն դրսևորման երկու ձև. մի դեպքում դրանք բխում են տեսությունից, մյուս դեպքում ՝ սկիզբ են առնում պրակտիկայից: Ուսուցման տեխնոլոգիաների հաջորդականություն է մշակել չեխ մանկավարժհումանիստ Յան Ամոս Կոմենսկին:

- հստակ նախատեսված նպատակներ
- այդ նպատակներին հասնելու հստակ միջոցներ
- որոշակի կայուն կանոններ, թե ինչպես կիրառել այդ միջոցները դրված նպատակներին հասնելու համար

Ինչու՞ օգտագործել համագործակցային ուսուցումը:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ կրթական փորձառությունները, որոնք ակտիվ են, սոցիալական, համագործակցային և ներառում են ուսանողներին, հանգեցնում են ավելի խորը ուսուցման: Համատեղ ուսուցման առավելությունները ներառում են.

- Բարձր մակարդակի մտածողության, բանավոր հաղորդակցման, ինքնակառավարման և առաջնորդության հմտությունների զարգացում:
- Ուսանող-դասախոսական կազմ փոխգործակցության խթանում.
- Ուսանողների ինքնագնահատականի և պատասխանատվության բարձրացում
- Տարբեր տեսանկյունների բացահայտում և ըմբռնման մեծացում:
- Նախապատրաստում իրական կյանքում սոցիալական և աշխատանքային իրավիճակներին:

Համագործակցային միջավայրում փոքր խմբերի ուսուցման առավելությունները ներառում են.

- Բազմազանություն. Ուսանողները սովորում են աշխատել բոլոր տեսակի մարդկանց հետ: Փոքր խմբերի հետ շփումների ընթացքում նրանք բազմաթիվ հնարավորություններ են գտնում մտածելու և պատասխանելու այն տարբեր հարցերին, որոնք համակուրսեցիները տալիս են: Փոքր խմբերը նաև թույլ են տալիս ուսանողներին ավելացնել իրենց տեսակետները խնդրին՝ հիմնվելով իրենց մշակութային տարբերությունների վրա: Այս փոխանակումը անխուսափելիորեն օգնում է ուսանողներին ավելի լավ հասկանալ այլ մշակույթները և տեսակետները:
- Անհատական տարբերությունների ճանաչում: Երբ հարցեր բարձրացվեն, տարբեր ուսանողներ կունենան տարբեր պատասխաններ: Սրանցից յուրաքանչյուրը կարող է օգնել խմբին ստեղծել այնպիսի արտադրանք, որն արտացոլում է հեռանկարների լայն շրջանակ և, հետևաբար, ավելի ամբողջական և համապարփակ է:
- Միջանձնային զարգացում. Ուսանողները սովորում են շփվել իրենց հասակակիցների և այլ սովորողների հետ, երբ նրանք միասին աշխատում են

խմբերում: Սա կարող է հատկապես օգտակար լինել այն ուսանողների համար, ովքեր դժվարություններ ունեն սոցիալական հմտությունների հետ: Նրանք կարող են օգուտ քաղել ուրիշների հետ կառուցվածքային փոխազդեցությունից:

- Ակտիվորեն ներգրավել ուսանողներին ուսման մեջ. Յուրաքանչյուր անդամ հնարավորություն ունի նպաստելու փոքր խմբերով: Ուսանողները կարող են ավելի շատ տիրապետել իրենց նյութին և քննադատաբար մտածել հարակից խնդիրների մասին, երբ նրանք աշխատում են որպես թիմ:

Համատեղ ուսուցման առավելությունները

Ուսուցում համակուրսեցիների միջոցով

Խմբային աշխատանքում ուսանողները կսովորեն իրենց համակուրսեցիներից: Երբեմն հասակակիցները կարող են ավելի լավ բացատրել հայեցակարգերը կամ գաղափարները իրենց գործընկեր ուսանողներին, քան դասախոսը կամ ուսուցիչը:

Բարելավում է քննադատական մտածողությունը

Խմբային աշխատանքի ընթացքում ուսանողները կհայտնեն իրենց կարծիքները կամ գաղափարները խմբի մյուս ուսանողների հետ՝ տրամադրելով հետադարձ կապ: Յուրաքանչյուր ուսանողի այս արձագանքը կներառի քննադատություն, ինչպես նաև արտահայտված կարծիքների կամ գաղափարների մեկնաբանում: Խմբային աշխատանքի վերջնական մասը հիմնված կլինի քննարկված ընդհանուր կարծիքների և գաղափարների վրա:

Ընդլայնում է խնդիրների լուծումը

Համատեղ ուսուցման համար նախատեսված խմբային աշխատանքի յուրաքանչյուր կտոր կպահանջի որոշակի խնդիրների լուծում: Խմբի յուրաքանչյուր անդամ պետք է օգնի լուծել խնդիրը՝ առաջադրանքն ավարտելու համար:

Բարելավում է հաղորդակցման հմտությունները

Սովորելու նպատակով խմբերով աշխատելը կխրախուսի մարդկանց բարելավել իրենց հաղորդակցման հմտությունները: Նրանք պետք է սովորեն, թե ինչպես հաղորդել իրենց կարծիքները կամ գաղափարները, ինչպես լսել այլ մարդկանց կարծիքները կամ գաղափարները և տրամադրել հետադարձ կապ:

Բարելավում է մշակութային իրազեկությունը

Տարբեր ծագման և մշակույթի մարդիկ կարող են ունենալ սովորելու տարբեր եղանակներ, ինչպես նաև տարբեր կարծիքներ կամ գաղափարներ, քան խմբի մյուս մարդիկ: Խմբերում աշխատելով՝ այս տարբերությունները կընդգծվեն և կբարելավեն մարդկանց տեղեկացվածությունը:

Համատեղ ուսուցման հիմնական առանձնահատկությունները

Համատեղ ուսուցումը հարստացնում է դասարանը ուսանողների համար: Այն սկսվում է բովանդակալից առաջադրանքներով, որոնք ներառում են ուսանողների մասնակցությունը բանակցային դերերին, պարտականություններին և արդյունքներին: Համատեղ ուսուցումը տարբերվում է պատվիրակված խմբային աշխատանքից: Այն ակտիվորեն խրախուսում է սովորել և միասին կենտրոնանալ, այլ ոչ թե բաժանել առաջադրանքի մասերը:

Խմբի ընտրությունը կենսական նշանակություն ունի, որը դուք պետք է տարբերեք՝ կախված բազմաթիվ գործոններից.

- Գործունեության նպատակը

- Ուսուցման անհատական նպատակներ
- Ընկերական հարաբերություններ և աշխատանքային հարաբերություններ
- Նպաստելով նոր հարաբերությունների կառուցմանը
- Հատուկ հմտությունների և ուժեղ կողմերի պատվիրակում

Խմբային ուսուցման գործողությունները հատուկ նախագծված են այնպես, որ ուսանողների համագործակցությունը արդյունավետորեն իրականացնի առաջադրանքը և ներառի դերերի, պարտականությունների և արդյունքների սեփականության իրավունքը:

Համագործակցային դասասենյակի բնութագրերը

Համագործակցային դասարանում սովորողները շատ գաղափարներ և տեսակետներ ունեն նույն առարկայի վերաբերյալ: Համատեղ ուսուցման պրակտիկան նախագծված է հեշտացնելու նման բազմազան հեռանկարները և խթանելու ուսանողների մասնակցությունը: Այս դասասենյակները հաճախ ունենում են բազմաթիվ նախագծեր, որոնք կարող են ներառել մեդիա և մշակութային արտեֆակտների լայն տեսականի: Նրանք կարող են նաև օգտագործել վիդեոկոնֆերանսներ՝ քննարկումներին մասնակցելու համար: Համատեղ ուսուցման հիմնական նպատակն է խթանել քննադատական մտածողության հմտությունների զարգացումը, և համագործակցային դասարանը պետք է հնարավորություն տա բոլոր ուսանողներին սովորել միմյանցից:

Համագործակցային դասարանում ուսուցչի դերն ավելի կարևոր է, քան երբևէ: Ուսուցչի դերն է միջնորդել ուսուցումը և հնարավորություն տալ ուսանողներին օգտագործել իրենց սեփական գիտելիքները: Ուսուցիչը հանդես է գալիս որպես միջնորդ և ճշգրտում է տեղեկատվության և աջակցության մակարդակը, որն անհրաժեշտ է անհատական ուսուցումը խրախուսելու և աջակցելու համար: Բացի այդ, ուսուցիչը ծառայում է որպես մարզիչ ուսանողների համար: Գործընկերության մոդելը թույլ է տալիս ուսուցչին և ուսանողներին առավելագույնի հասցնել սովորելու սեփական կարողությունները:

Աշակերտների գիտելիքները կիսվում են ուսանողների և ուսուցիչների միջև, սակայն ուսանողն է, ով ի վերջո պատասխանատու է հասկանալու, թե որն է տեղեկատվությունը: Թեև ուսուցիչները պետք է լինեն աջակցություն ցուցաբերելու համար, երբ խմբերը խրված լինեն, նրանք պետք է նաև նպատակ ունենան առավելագույնի հասցնել ուսանողների ինքնուրույն սովորելու կարողությունը: Ուսանողներին գդալով կերակրելու փոխարեն ուսուցիչը պետք է օժանդակող լինի ուսանողների ուսմանը աջակցելու և անձնական օրակարգեր պարտադրելուց խուսափելու համար: Համագործակցային դասարանը կարող է ուսուցումը դարձնել զվարճալի և արդյունավետ բոլոր ներգրավված կողմերի համար:

Համագործակցող ուսուցիչները խուսափում են աշակերտներին տարանջատել ըստ կարողությունների, ձեռքբերումների և հետաքրքրությունների: Սա թուլացնում է համագործակցությունը և աղքատացնում դասարանները: Համագործակցային դասարանում ուսանողները սովորում են միմյանցից: Այս մոտեցումը ձեռնտու է թե՛ ուսանողներին, թե՛ ուսուցիչներին:

Խմբի չափը

Արդյունավետ համագործակցային ուսուցումը պահանջում է մի շարք պայմաններ, որոնք կենտրոնացած են խմբի չափի, կազմի և փոխազդեցության դինամիկայի շուրջ: Հետազոտությունները ցույց են տվել, որ խմբի չափը զգալի ազդեցություն ունի համագործակցային ուսուցման վրա: Մեծ խմբերը դժվար թե դրական արդյունք ունենան ուսանողների համար, մինչդեռ փոքր խմբերը, թվում է, դրական ազդեցություն են թողնում ուսման վրա: Դասասենյակում մեծ խմբերը կարող են այնքան արդյունավետ չլինել, որքան փոքրերը: Արդյունքում ուսուցիչները պետք է ձևավորեն ուսանողների փոքր խմբեր՝ առցանց ուսուցման մեջ իրենց ներգրավվածությունը մեծացնելու համար: Գործոններից մեկը, որը պետք է ազդի խմբի չափի վրա, յուրաքանչյուր խմբում սովորողների թիվն է: Յուրաքանչյուր խմբում ուսանողների օպտիմալ թիվը 12-ն է, բայց չափը կարող է հասնել մինչև 17-ի: Սա նշանակում է, որ համագործակցային դասարանի առավելագույն խմբի չափը պետք է լինի 12-ից 17-ի միջև:

Տարանջատում

Համագործակցային դասարանները բաժանված չեն ձեռքբերումներով, կարողություններով կամ հետաքրքրություններով: Նման տարանջատումը աղքատացնում է դասարանը և թուլացնում համագործակցությունը: Ի հակադրություն, համագործակցային դասարանում միջին ուսանողները կարող են օգուտ քաղել ավելի խելացի ուսանողներից: Համագործակցային դասարանում ուսուցիչները կարող են հեշտացնել խմբային հաղորդակցությունը և համագործակցությունը՝ զարգացնելով ճկուն սոցիալական կառույցներ: Այս կառույցները մի քանի գործառույթ են կատարում խմբային փոխազդեցության մեջ և ազդում ուսանողների վերաբերմունքի վրա: Ուսուցիչները զարգացնում են այս սոցիալական կառույցները ուսանողների հետ համագործակցելով և ըստ անհրաժեշտության վերանայում դրանք: Ուսանողները և ուսուցիչները քննարկում են խմբերի տարբեր սոցիալական գործառույթները և մշակում կանոններ, որոնք հեշտացնում են խմբային փոխգործակցությունը: Օրինակ, ուսանողը կարող է կատարել տեղեկատվություն փնտրելու գործառույթ, պարզաբանել հարցը կամ խրախուսել մեկ այլ ուսանողի:

Ուսանողները կազմակերպվում են տարասեռ խմբերի և նրանց տրվում են դերեր տարբեր ուսումնական գործողություններում համագործակցային դասարանում: Բացի ուսանողներից, համագործակցային դասարանների ուսուցիչները նույնպես աշխատում են ներգրավել ծնողներին, համայնքի անդամներին և այլ շահագրգիռ կողմերին:

Ուսանողների ինքնավարության խթանման մարտահրավերը համագործակցային դասարանում հսկայական է: Ուսուցիչները պետք է պատասխանատվություն ստանձնեն ուսուցման անհատական արդյունքների համար, սակայն համագործակցային դասարանների կառուցվածքը կարող է խանգարել առանձին ուսուցիչներին տարասեռ խմբերի ձևավորմանը: Առանձին աշակերտի աշխատանքի արդյունքն օգտագործելը առաջադիմությունը չափելու համար դժվար է, բայց

արդյունքն ավելի լավ ընդհանուր կրթությունն է: Համատեղ դասասենյակներն ավելի արդյունավետ դարձնելու համար կպահանջվի դպրոցական վերակառուցում:

Եզրակացություն

Վերջին տարիներին գիտելիքը դարձավ կրթության բովանդակության բաղադրիչներից մեկը և անհրաժեշտ այլ բաղադրիչների հետ ներմուծվեց նաև հաղորդակցման ունակություններ, հմտություններ, կարողությունների բաղադրիչը:

Ուսումնասիրելով թեման կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները.

1. Նոր բովանդակությունը պահանջում է այլ բնույթի ուսումնական պարապմունքներ, համագործակցային ուսուցման տեխնոլոգիաների կիրառում, որոնց ժամանակ կստեղծվեն մանկավարժական այնպիսի իիրադրություններ որտեղ կձևավորվեն կզարգանան հաղորդակցվելու, քննադատելու իրավիճակին հարմարվելու բացատրելու ապացուցելու, սովորելու և այլ կարողություններ, նշանակում է ժամանակակից կրթության բովանդկությունը պահանջում է փոփոխություն նաև ուսուցման կազմակերպման գործընթացում, ինչն էլ ենթադրում է, որ կրթության բովանդակությունը և ուսուցմանգործընթացի կազմակերպումը սերտ կապված են:
2. Կարծում եմ ապագա դպրոցի գերխնդիրը՝ ձևավորել ինքնուրույն մտածողություն, աշխարհաճանաչողություն, սովորել մտածել և համագործակցել: Հետևաբար կիրառելով ուսուցման կոլեկտիվ եղանակի տարբեր մեթոդներ:
3. Այսպիսի աշխատանքի ազմակերպմանը օգնում են դասարանում առկա լրացուցիչ գիտական գրականությունը, շտեմարանները, քարտեզները, համացանցը:
4. Ուսուցման գործընթացի կատարելագործման համար կարծում եմ անհրաժեշտ են կրթության կազմակերպման նորագույն ձևերի կառուցում,

համագործակցային մեթոդների տեխնոլոգիաների կիրառումը, որը կհանգեցնի կրթության ոլորտի վերաիմաստավորմանը, համագործակցային հարաբերությունների ձևավորմանը և անհատականացված կրթական համակարգի վերաձևավորմանը:

Օգտագործված գրականության ցանկ

https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%A1%D5%B4%D5%A1%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%A1%D5%AF%D6%81%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6_%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B8%D6%82%D5%B4

http://shsu.am/media/journal/2019n1b/5.pdf

https://diplomayin.am/ashxatanq/3771/

Ադամյան Ն., Դասավանդման մեթոդիկայի արդի տեխնոլոգիաներ, Ուսումնամեթոդական ձեռնարկ, «Էդիթ Պրինտ», Երևան 2018, 264 էջ:

Ադամյան Ն., Գրիգորյան Ա., Գդլյան Գ., Կենսաբանության համագործակցային դասերի պլանների նմուշներ, Հանրապետական գիտ. նստաշրջան, Նյութերի ժողովածու, Գյումրի, ԳՊՄ-ի, 10.11-դեկտեմբեր 2007, «Դպիր» հրատ., 2008, էջ 408-413:

Արնաուդյան Ա., Օհանովա Ի., Գրիգորյան Ք., Դավթյան Մ., Զոհրաբյան Ա., Հովհաննիսյան Գ., Սեմինար պարապմունքների ուղեցույց, Ձեռնարկ ուսումնական ծրագրեր մշակող մասնագետների համար, ԱՅՈԵՔՍ, Երևան, 2002, 272 էջ:

Դավթյան Մ., Գրիգորյան Ք., Արնաուդյան Ա., Զոհրաբյան Ա., Հովհաննիսյան Գ., Օհանովա Ի., «Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ», Ձեռնարկ ուսուցիչների համար, ԱՅՈԵՔՍ, Երևան, Տիգրան Մեծ, 2004, 319 էջ: